ԱՐԴՅՈՔ, ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ՞ ԴԱՌԱՆԱԼ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ.

ألم بأن لك أن تكون مسلما باللغة الأرمينية

Հեղինակ

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة

Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

ԱՐԴՅՈՔ , ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ՞ ԴԱՌԱՆԱԼ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ.

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Թարգմանությունը

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

© *Գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին*

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Հեղինակը թույլատրում է վերատպել կամ կրկին հրատարակել գիրքը, եթե որպես նպատակ ծառայում է գրքի անվճար տարածումը, որի ընթացքում արգելվում է կատարել փոփոխություններ:

Վերոնշյալ կանոնները պահպանելու և անհրաժեշտության դեպքում հեղինակը պատրաստ է տրամադրել գրքի բարձրորակ կրկնօրինակներ էլեկտրոնային վիճակով:

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԳԹԱՍԻՐՏ և ԲԱՐԵԳՈՒԹ ԱԼԼԱՀԻ

ՓԱՌՔ Ալլահին , խաղաղություն և օրհնություն Մուհամեդին , Ալլահի Մարգարեյին , նրա ընտանիքին և ուղեկցոնոդներին :

Հարգելի ընթերցող.

Այս գրքույկում , ես կփորձեմ հակիրճ թվարկել Իսլամի տարբերակիչ հատկանիշները , որոնք , ուսումնասիրման և փնտրտուքի բանալի կդառնան նրանց համար , ովքեր փնտրում են ճշմարտությունը : Ես համոզված եմ , եթե անաչառ մուսուլմանները գիտակցեն , ապա այդ , անկասկած, պատճառ կհանդիսանա ընդունել Իսլամ : Սակայն այն ունի որոշակի պայման .

- Անկեղծ մտադրություն , փնտրելու և հետևելու ճշմարտությանը , այլ ոչ թե սխալները : Իրոք, Ամենաբարձրյալ Ալլահը պատասխանատու է այն անձի համար , ով ցանկանում է իմանալ ճշմարտությունը և Նա, կտանի նրան ճիշտ ՈՒղղով : Այն կիրագործվի հավատքի քաղցրությամբ , անկեղծ սրտով և առ Նա տանող ճանապարհների հեշտությամբ : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Ում Ալլահը ցանկանում է ուղղորդել ճիշտ ուղղու , բացում է նրա սիրտը իսլամի համար , իսկ նրան , ում ցանկանում է մոլորեցնել , ճնշում և սեղմում է սիրտը , ասես նա բարձրանում է երկինք: Այսպես է Ալլահը պատժում նրանց , ովքեր չեն հավատում** :» (Ղուրան 6:125)

- Անկեղծ խնդրանք միայն Ալլահին , հաստատակամություն այդ բանում և հաջողություն պատասխանում : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մարդիկ մեկ համայքն էին , և Ալլահը ուղարկեց մարգարեներ ավետիսով և զգուշացումներով , ուղարկեց նրանց հետ Գրություններ ճշմարտությամբ , որպեսզի դատի մարդկանց տարակարծության մեջ : Սակայն տարակարծիք էին միայն նրանք , ում ուղարկվել էր Գրերը , այն բանից հետո , երբ նրանց հայտնվեցին պարզ նշաններ , միմյանց նկատմամբ նախանձի և անարդարության պատճառով : Ալլահը Իր կամքով ուղարկեց նրանց , ովքեր

հավատացել էին ճշմարտությանը , որի շուրջ տարակծայնություններ կային : Ալլահը ուղղորդում է նրան , ում ցանկանում է :» (Ղուրան 2 : 213)

- Կրոնական ծայրահեղության թողնելը և հայրերի և պապերի կրոնին կուրորեն հետևելը , որը հիմնված չէ գիտության , գիտակցության և պարզ ուղղորդության վրա : Նույնպես իսլամի ծանոթության գրքերի ընթերցումը , որոնք հիմնված են բանական և գիտական արդյունքների վրա , այլ ոչ թե փիլիսոփայական կամ կրոնական զգացմունքների : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**«Երբ նրանց ասում են . « Հետևեք նրան , ինչ ուղարկել է Ալլահը « նրանք պատասխանում են . « Ոչ, մենք կհետևենք նրան , ինչին հետևում են մեր հայրերը :» Իսկ եթե նրանց հայրերը ոչինչ չէին գիտակցում և հետևում էին սխալ ուղղու՞»»** (Ղուրան 2 : 170)

Այսպիսով , ճշմարտություն փնտրող ոչ մուսուլմանը , կիմանա , որ Իսլամը ոչ միայն արաբների , այլև ամբողջ մարդկության համար է, քանի որ Իսլամում չկա ռասսայականություն : Նա , ով հավատացել և հետևել է դրան , հանդիսանում է մուսուլման , նույնիսկ եթե նա ծագումով աշխարհի հեռավոր անկյունից է : Իսկ նա , ով չի հավատում և հետևում , չի հանդիսանում մուսուլման , նույնիսկ եթե նա Ալլահի Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) ժառանգներից է :

Օրինակ , Բիլել իբն Ռաբահը , թող Ալլահը գոհանա նրանով , Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մուադզինը , եթովպացի ստրուկ էր : Սուհեյբը հույն էր , իսկ Սալմանը պարսիկ : Նույնպես, Իսլամը չի սահմանափակվում Մեքքայով, Մեդինայով կամ Արաբական թերակղզով : Հակառակը , ցանկացած պետություն , որը հիմնված է Իսլամի վրա , հանդիսանում է իսլամական , նույնիսկ եթե այն գտնվում է Աֆրիկայի խորքերում :

- Իսլամով առաջնորդվելը և ըստ դրա կառավարելը , հանդիսանում է ուղղի և կատարյալ օրենսդրություն , այն նման չէ անպատասխանատու անձանց կամ կառավարությունների օրենսդրություններին: Գոյություն ունեն բազմաթիվ աղանդներ և պետություններ , որոնք իրենց վերաբերում են Իսլամին , բայց այն իրենցից բավական հեռու է , նրանք , ովքեր մեծ հետք են թողել իրական Իսլամի աղավաղման և ոչ մուսուլմաններին վախ ներշնչելու գործընթացում : Այն իրականացել է իրենց կամայականությունների , արարքների և հավատքի շնորհիվ, որոնք նրանք իրականացրել են բանականության սահմաններից դուրս , թշնամական ձգտումով և ժամանակակից հասարակությանը

համապատասխան , վերագրելով այն Իսլամին : Ուստի անհրաժեշտ է իմանալ , որ ցանկացած համոզմունք կամ արարք , որը հակազդում է բանականությանը և որին համամիտ չէ մուսուլմանը ,չի հանդիսանում Իսլամ : Քանզի Իսլամը միաստվածություն է , որը չի խառնվում բազմաստվածության հետ , երկրպագություն , որին չի վերաբերվում ցուցամոլությունը , բարոյականություն , որը չի խառնվում խայտառակության հետ : Այն կյանքի համակարգ է , որում չկան թերություններ , այն պարզ է և չունի մոլորություններ : Սակայն մուսուլմանները տարբերվում են դրա ընկալմամբ և հետևմամբ : Նրանց մեջ կան ինչպես քիչ , այնպես էլ շատ ժրաջան հետևորդներ : Ալլահը լուսաբանեց այդ Ղուրանում , ասելով .

«Հետո Մենք տվեցինք Գրեր, ժառանգություն նրանց Մեր ստրուկներից , ում Մենք ենք ընտրել : Նրանց մեջ կան նրանք , ովքեր անարդար են իրենց իսկ նկատմամբ , հավասարակշռված և ուրիշներին գերադրող իրենց արարքներում , Ալլահի թույլտվությամբ : Այս է մեծ ողորմածությունը:» (Ղուրան 35:32)

- Տեղեկատվության ընկալումը որը կապված է Իսլամի հետ , այն խորապես ուսումնասիրելուց հետո , այլ ոչ թե Իսլամի թնամիներից կամ հանրային տեղեկվատական միջոցներից : Այդ պատճառով , նա , ով ցանկանում է իմանալ ինչ է Իսլամը , պետք է իմանա հավաստի աղբյուրներից : Դրանցից են սուրբ Ղուրանը , Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) սուննան և Ումմայի համընդհանուր համաձայնությունը : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ես թողել եմ ձեզ այնպիսի մի բան , որին հետևելով դուք երբեք չեք մոլորվի ինձանից հետո , դրանք են Ալլահի Գիրքը և իմ Սուննան :»

- Յուրաքանչյուր մարդ փնտրում է լավագույնը և կատարյալը ամեն հարցում , որը կապված է կյանքի հետ : Այն հանդիսանում է մարդկային հոգու թշնամական հատկանիշը , որը արարել է Ալլահը : Մարդ հասնում է դրան այն գիտակցումով , ինչ համապատասխանում է իրեն և ինչ լավ է , համեմատելով իր ունեցածի հետ : Ի հակադրություն դրան , նա պիտի փնտրի լավագույն և ամենակատարյալ կրոնը , որը ապահովում է նրա հոգու և սրտի հանգստությունը , պահպանում է մարմինը , միտքը , պատիվը և ունեցվածքը : Այս ամենին կարելի է հասնել միայն հանգիստ

ընթերցումով. պարզ համեմատությամբ, որոշման անշտապությամբ և պատասխանատվությամբ :

- Լիարժեք և հստակ հայտնի է, որ մահից հետո կյանքը կշարունակվի կամ Դրախտում, որի լայնքը հավասար է երկրի և երկնքի լայնքին և որը աստվածավախների համար է, կամ Կրակում, որի վառելիք են մարդիկ և քարեր, ստորևէ որի, կան դաժան և խիստ հրեշտակներ: Նրանք ետ չեն կանգնում Ալլահի հրամաններից և անում են ամենը, ինչ հրամայված է:

«**Այսպես, Մենք ներշնչել ենք քեզ Ղուրանի լուսաբանում արաբերեն, որպեսզի դու զգուշացնես բնակությունների Մորը (Մեքքայի բնակիչներին) և նրանց, ովքեր նրա շուրջ են և զգուշացրել եմ Հավաքի Օրվանից, որում կասկած չկա: Մարդկանց մի մասը կհայտնվի Դրախտում, իսկ մյուս մասը կհայտնվի Կրակում**:» (Ղուրան 42 : 7)

Խնդրում եմ Ալլահին, որ տա հաջողություն, ամրություն և սրտի անկեղծություն Ճշմարտության ընդունելու համար նրան, ով կընթերցի այս գիրքը և որ նա, կհետևի դրան:

Դոկտոր. Աբդուլռահմեն բ. Աբդուլկարիմ Աշ- Շիհա

Ի՞ՆՉ Է ԻՍԼԱՄԸ.

ԻՍԼԱՄԸ Ալլահին հնազանդվելն է: Հնազանդություն այնին, ինչ Նա է ցանկանում, որպեսզի երկրպագես Նրան և չտաս գործընկեր, հնազանդվես նրա հրամաններին և հեռու մնաս Նրա արգելքներից: Այսպիսով, Իսլամը մշտական կապ է մուսուլմանների և Նրանց Տիրոջ միջև: Մուսուլմանը օրվա և գիշերվա ընթացքում հինգ անգամ կոչում է Նրան, կատարելով աղոթքներ: Նույնպես, նա գտնվում է մշտական կապի մեջ, կոչելով Նրան և հիշատակելով ամենօրյա գործերի ընթացքում, օրինակ, ուտելուց առաջ և հետո, արտաքնոց մտնելուց առաջ և հետո, տուն մտնելուց առաջ և հետո, քնելուց առաջ և հետո, լվացումից առաջ և հետո, կնոջը մերձենալուց առաջ և հետո, քաղաքական տրանսպորտ նստելուց առաջ և այլն: Այսպիսով մուսուլմանի կյանքը ամբողջովին նվիրված է Ալլահին և անքակտելի կապված է Նրա հետ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««**Ասա. «Իրոք իմ նամազը և իմ զոհաբերությունը, կամ երկրպագությունը, իմ կյանքը և իմ մահը նվիրված է Ալլահին, Աշխարհների տիրոջը**:»» (Ղուրան 6: 162)

ԻՍԼԱՄԻ ՈՐՈՇ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՈՐԱԿՆԵՐԸ

ԻՍԼԱՄԸ վերջին երկնային լուսաբանումն է: Ալլահը, բացի Իսլամից, ոչ մի ուրիշ կրոն չի ընդունում: Ամենաբարձրյալը այսպես է բացատրել այդ մեզ.

«**Նրանից, ով փնտրում է ուրիշ կրոն բացի իսլամից, երբեք չի ընդունվի և Վերջին կյանքում նա կլինի ձախողվածների շարքում**:» Ղուրան 3 : 85

Այս կրոնը ,անկասկած, պիտի ունենա տարբերակիչ գծեր, որոնք մատնանշում են այն, որ համապատասխանում է ցանկացած ժամանակին և վայրին, մինչ Դատաստանի Օրը: Ահա, նրա որոշ տարբերակիչ որակներից .

1. ԲՆԱԾԻՆ ՈՐԱԿՆԵՐԸ.

ԻՍԼԱՄԸ առողջ, բնածին որակի կրոն է, որով Ալլահը արարել է մարդկանց: Այն արարվել է Աստծո գոյության համոզմունքով: Դրա օգնությամբ մարդը

կարող է գիտակցել Նրան , մտորել Ալլահի արարածների ,Նրա Գթասրտության և գոյության մասին: Այս ամենը բերում է դեպի Նա : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Ուղղիր քո դեմքը առ կրոն , ինչպես խանիֆ : Այսպիսին է բնածին որակը , որով Ալլահը արարել է մարդկանց : Ալլահի արարածները ենթակա չեն փոփոխման : Այսպիսին է իրական հավատքը , բայց մարդկանց մեծամասնությունը չգիտեն այդ :» Ղուրան 30:30

Այս, բոլոր արարածների հիմքն է , սակայն բնածին գործոնի վրա ազդեցություն կարող են թողնել շրջակա միջավայրը , որը կարող է փոխել նրան և շեղել ճիշտ ուղղուց: Այն կարող է տանել բազմաստվածության , Նրա գոյության մերժման կամ այլի երկրպագման : Ալլահի Մարգարեն Խ.Ա.Ո.Ն ասաց.

«Յուրաքանչյուր նորածին ծնվում է բնածին որակով , իսկ հետո ծնողները նրանից դարձնում են հրեա, քրիստոնյա կամ զրադաշտական:»

2. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ԻՍԼԱՄԸ միաստվածության և անկեղծության կրոն է , որը դրդում է երկրպագել միայն Միակ Ալլահին: Այսպիսով , ամրապնդվում է Ալլահի և Նրա ստրուկների ուղակի կապը, որը հիմնված է Նրա կատարյալ հավատքի , Նրա պաշտպանությունը փնտրելու , խնդրելու և թողություն վերցնելու և օգնություն խնդրելու միայն Նրանից , առանց բարեխոսների : Ալլահի և Նրա ստրուկների միջև գոյություն ունեցող բոլոր բարեխոսների կերպարները չքանում են : Հանդիմանության են ենթարկվում բազմզստվածները , որոնք իրենց բարեխոսներ են համարում : Ամենաբարձրյալ Ալլահը այսպես ասաց նրանց մասին .

«« Ճշմարիտ , անբիծ հավատքը կարող է նվիրվել միայն Ալլահին: Իսկ նրանք , ովքեր վերցրել են իրենց Նրա փոխարեն ուրիշ հովանավորներ և օգնականներ, ասում են. » Մենք երկրպագում ենք նրանց միայն այն պատճառով , որ նրանք մերձեցնեն մեզ Ալլահին, որքան հնարավոր է մոտ :»» (Ղուրան 39 :3)

Այսպիսով , Միաստվածության խոսքերը . « Չկա աստված , բացի Ալլահից» ունի նշանակություն . «Չկա ոչ ոք արժանի երկրպագման , բացի Ալլահից :» Այն հանդիսանում է իսլամի մուտքի բանալին : Այդ պատճառով է Ալլահը արարել Իր արարածներին և Դրախտն ու Դժոխքը : Այդ բոլոր մարգարեների և առաքյալների կոչն է , սկսած Նոյից ,ավարտված

մարգարեների դրոշմից , Մուհամեդից (Խ.Ա.Ո.Ն) : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««**Մենք ուղարկել ենք քեզանից առաջ առաքյալներ , որոնց ներշնչել ենք. « Չկա աստված, բացի Ինձանից : Երկրպագեք Ինձ** :»» (Ղուրան 21:25)

ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԽՈՍՔԸ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է .

- ԱԼԼԱՀԻ ՄԻԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՊԱԳՄԱՆ ՄԵՋ. Կատարյալ մերժում որևէ բանի կամ մեկի աստվածայնության , բացի Ալլահից , ինչպես նաև միայն Ալլահին երկրպագելու համոզվածություն : Այսպիսով , մուսուլմանը ոչ մեկին չի դնում հավասար Ալլահին և երկրպագում է միայն Նրան : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Այսպիսին է Ալլահը , ձեր Տերը : Չկա աստված, բացի Նրանից , ամենի Արարիչը: Երկրպագեք Նրան : Նա ամենի Հոգաբարձուն և Պահապանն է:**" Ղուրան (6 : 102)

- ԱԼԼԱՀԻ ՄԻԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ . համոզմունք , որ միայն Նա է ամենի Տերը , Տիրակալը , Արարիչը ամեն արարածի , Սնողը, Կենդանացնողը , Մահ տվողը , Հարություն տվողը այն Օրը , որը անկասկած է : Այսպիսով , չկա ոչ մի արարիչ , կառավարիչ , գոյության որոշողը , բացի Ալլահից : Նույնպես չկա օրենսդիր երկրպագության փոխհարաբերությունների համակարգի մեջ , լինի անձնական , թե հասարակական : Չկա թույլատրող կամ արգելող , բացի Նրանից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Նա Կենդանի է և չկա աստված, բացի Նրանից : Կոչեք Նրան , մաքրազարդելով Նրա մոտ հավատքը : Փառք Ալլահին , աշխարհների Տիրոջը** :» Ղուրան (40 : 65)

- ԱԼԼԱՀԻ ՄԻԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ և ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ .

Ալլահի միակությունը (Ալլահը Սուրբ և Հզոր է) իր կատարելության բոլոր հատկանիշներում , որոնք ենթադրում են հեռացում ամեն թերությունից և նմանակումից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Երկնքի և երկրի արարիչ : Նա արարել է ձեզանից կանայք ձեզ համար և նույնիսկ անասուն, զույգերով : Այսպես , նա բազմացնում է ձեզ : Չկա հավասար Նրան , և Նա Լսող և Տեսնող է :» (Ղուրան 42 :11)

3. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ.

Ալլահը արարել է մարդկանց միայն երկրպագելու Իրեն : Ալլահը հաղորդել է այս մեզ ասելով .

«Ես արարեցի ջիններին և մարդկանց միայն նրա համար , որ նրանք երկրպագեն Ինձ:» (Ղուրան 51: 56)

Մարդկանց պահանջը երկրպագելու հանդիսանում է բնածին : Ինչպես մարմինը կարիք ունի ուտելիքի և ըմպելիքի , որպեսզի գոյատևի , այնպես էլ նրանց հոգիները կարիք ունեն երկրպագելու , որպեսզի հանգստանան և մխիթարվեն : Այս պարզ երևում է առանց բացառության յուրաքանչյուրի մեջ : Հոգիները ձգտում են օգնություն գտնել Նրա մոտ , ում երկրպագում են , խնդրելով Նրան կարիքների բավարարում , որը տալիս է հանգստության և մխիթարության զգացում :

Սկսած Ադամից (խաղաղություն նրան) մինչ Նոյը (խաղաղություն նրան) մարդկությունը երկրպագում էր միայն Ալլահին : Բայց բազմաստվածությունը սկսեց Նոյի ժողովրդից և նրանք սկսեցին երկրպագել կուռքերին : Այդ, բազմաստվածության սկիզբ հանդիսացավ , որը հետագայում ձեռք բերեց բազմաթիվ ձևեր և արտահայտումներ : Հայտնվեցին մարդիկ , ովքեր երկրպագում էին քարերի , ծառերի , կենդանիների և նույնիսկ բնության երևույթների : Այդ իսկ պատճառով ուղարկվեցին մարգարեներ , որպեսզի վերադարձնեն մարդկանց ճիշտ հավատքի և անբիծ միաստվածության :

Նույնիսկ աթեիստների մեջ , ովքեր ընդհանրապես չեն հավատում Աստծո գոյությանը , (թող Ալլահը փրկի մեզ դրանից) , կա ակնհայտ երկրպագություն , որը արտահայտվում է շեյթանին , կրքերին , խոնարհվելով : Այդ են պահանջում հոգին և կրքերը, որը հանդիսանում է անարդարության գագաթնակետ , ինչպես մարդու անձի , այնպես էլ ուրիշների նկատմամբ : Այդպիսի մարդը ապրում է աննպատակ , բարոյական խնդիրներով և հոգեկան անհանգստությամբ : Իսկ հավիտյան կյանքում նրանց համար պատրաստված է դժոխային կրակը և « կմտնի այնտեղ միայն ամենադժբախտը , ով իսկությունը համարում է սուտ և շրջվում է :» Նա հանդիսանում է մյուսների կեղեքիչ , քանի որ ձգտում է բավարարել իր իսկ կրքերը ամեն գնով , նույիսկ ի հաշիվ մյուսների : Նա չունի սկզբունքներ և

համոզմունքներ , որոնք նա հարգում է : Նա չունի թույլատրելիի և անթույլատրելիի սահմաններ կանգ առնելու : Այս են ապացուցում Ամենաբարձրյալ Ալլահի խոսքերը.

«Տեսե՞լ եք դուք նրան , ով աստվածացրել է իր կիքը : Ալլահը նրան մոլորեցրել է գիտական հիմունքներով , զմռսել է նրա լսողությունը և սիրտը և նրա հայացքին ծածկոց է նետել : Ո՞վ կտանի նրան ճիշտ ուղղու , Ալլահից հետո : Մի՞թե դուք չեք հիշում խրատը :» (Ղուրան 45: 23)

Նայիր քո շուրջը տեղյակ մարդու տեսանկյունից և կգտնես նրան , ով Ալլահին գործընկեր է տալիս և նրան , ով չի երկրպագում Ալլահին : Մուսուլմանները ճիշտ հավատքի կրողներն են , նրանք երկրպագում են միայն Ալլահին, առանց Նրան գործընկեր տալու :

Հուդաիզմը աղավաղվել է և նրա հետևորդները պատկերացրեցին , որ Ուզեյրը Ալլահի որդին է : Քրիստոնեությունը աղավաղվեց և նրա հետևորդները պատկերացրեցին , որ իրենց երևում է Հիսուսը , Մարիամի որդին : Խոսքեր չկան մյուս կրոնների մասին , որոնք սկսեցին երկրպագել այն ամենին, ինչ հեռու է բանականությունից և բնածին հատկանիշից : Նրանք երկրպագում են կուռքերի , կենդանիների և մոլորակների : Ճիշտ է ասում Ամենաբարձրյալ Ալլահը .

«Նրանց, ում դուք կոչում եք Ալլահին հավասար , ստրուկներ են ձեր նման : Կոչեք նրանց և թող նրանք պատասխանեն ձեզ , եթե դուք ճիշտ եք ասում :» (Ղուրան 7 : 194)

4. ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .

Իսլամը բանականություն և միտք հարգող կրոն է : Ղուրանի տեքստերի մեծամասնությունը կոչում են մարդուն արարքների , դիմելով կամ արթնացնելով գիտակցություն և խորը մտորումների այսպիսի խոսքերով . « Մի՞թե նրանք չեն մտորի :» «Մի՞թե նրանք խորը չեն մտածի:» « Մի՞թե նրանք չգիտեն :» «Մի՞թե նրանք չեն տեսնում :» Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Իրոք, երկրի վրա և երկնքում հավատացյալների համար կա նշաններ : Ձեր և կենդանիների արարման մեջ , որոնց նա բնակեցրեց , կան նշաններ համոզված մարդկանց համար : Գիշերը օրվա փոփոխության , ժառանգության մեջ , որը Ալլահը ուղարկել է երկնքից և որի միջոցով Նա կենդանացնում է երկիրը, նրա մահից հետո և քամիների փոփոխության մեջ կան նշաններ , մտորող մարդկանց համար :» (Ղուրան 45 :3-5)

Գոյություն ունի մտքի և բանականության օգտագործման միայն մեկ սահմանափակում . դրանք պետք է կանգ առնեն զգայական օրգանների զգացումների սահմանում : Իսկ ինչ վերաբերվում է գաղտնի հարցերին[1], որոնք հասու չեն զգայական օրգաններին, այս դեպքում բանականությունը չունի հնարավորություն իմանալ դրանք : Այն համարվում է ջանք , որը երբեք չի բերի ցանկալի արդյունք : Քանի որ , մարդը չի կարող հասնել դրանց առանց առաքյալների, որոնց ուղարկել է Ալլահը : Եվ նրանք էլ հաղորդել են այդ մարդկանց : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Նա , Գաղտնիի Իմացողն է և Նա չի բացահայտում Իր գաղտնիքը ոչ ոքի , բացի այն առաքյալներից , որոնցից Նա գոհ է և որոնց առջևից և ետևից Նա տալիս է պահակախումբ** :» (Ղուրան 72 :26-27)

Այսպիսով , իսլամի բոլոր ուսմունքները , հաստատվում են առողջ բանականությամբ և անաչառ մտքերով : Իսլամի իսկությունը և նրա օգուտը ամբողջ մարդկության համար արտահայտվում է նրանում , որ նրա բոլոր հրամանները և արգելքները արդար են , չկա անարդարության նշույլ: Եթե որևէ բան հրամայվում է , ապա կա ակնհայտ կամ գերակշռող օգուտ : Այն պարզ է այն անձի համար , ով խորը խորհում է Ղուրանի այաթների և Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հավաստի Հադիթների վրա :

5. ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Իսլամի ուսմունքը հանդիսանում է աստվածային , քանի որ այն կապված է հավատքի , երկրպագության , բարոյականության և իրավունքների հետ : Այս ամենը հաստատված է և փոխարինման կամ փոփոխման ենթակա չէ : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

« **Նա ուղարկվել է աշխարհների Տիրակալի կողմից** :» (Ղուրան 56 : 80)

Նրա աղբյուրը մարդը չէ , ով ունի թերություններ , սխալներ , որի վրա ազդում են շրջապատող մշակույթը , հասարակությունը , սովորույթը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Մի՞թե նրանք սպասում են տգիտության ժամանակների դատաստան : Ու՞մ որոշումները կարող են լինել Ալլահի որոշումներից ավելի լավ , համոզված մարդկանց համար** :» (Ղուրան 5 :50)

---

[1] Գաղտնի հարցերը. Դրանց մասին ոչ ոք չգիտի , բացի Ալլահից : Բայց գոյություն ունեն գաղտնի հարցեր , որոնց մասին Ալլահը հաղորդեց նրան , ում ցանկանում է , իր առաքյալներից , իսկ նրանք էլ իրենց հերթին հաղորդեցին մյուս մարդկանց :

Այդ պատճառով իսլամը միակ կրոնն է , որը փոփոխության կամ փոխարինման չի ենթարկվել և նրա տեքստերը պաշտպանված են ավելացումից և լրացումից : Այսպիսով , իսլամի հիմնական աղբյուրներն են.

Ա . ՍՈՒՐԲ ՂՈՒՐԱՆԸ.

Այսօր այն նույնն է , ինչ հազար հինգ հարյուր տարի առաջ , այն պահից սկսած, երբ այն լուսաբանվեց Մարգարե Մուհամեդին (Խ.Ա.Ո.Ն) : Ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել ոչ տառերում , ոչ այաթներում , ոչ սուրաներում , ոչ մի աղավաղում , ավելացում կամ լրացում : Այն մեզ է հասել հաղորդողների ապահով և անխախտ շղթայով , որը պահպանվել է գրքերում և հավատացյալների սրտերում : Մուսուլմանները պահպանում էին Ալլահի Գիրքը , ձգտելով ուսումնասիրել և սովորեցնել այն , հասնելու բարիքի, որի մասին ասել է Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն).

«Ձեզանից լավագույները նրանք են , ովքեր ուսումնասիրում են Ղուրանը և սովորեցնում են ուրիշներին :»[2]

Ղուրան ընթերցելը կամ սովորելը, համարվում է երկրպագություն Ալլահին : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«« Յուրաքանչյուրին , ով Ալլահի Գրքից նույնիսկ մեկ տառ է կարդում , գրվում է բարիք և յուրաքանչյուր այդպիսի բարիքի համար , տրվում է տասնապատիկ ավել պարգև :Ես չեմ ասում , որ ' Ելիֆ, լյամ, միմ ' մեկ տառ է , ոչ , ' ելիֆ' տառ է , և 'լյամ' տառ է և ' միմ' տառ է :»»[3]

Բ. ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՍՈՒՆՆԱՆ.

Այն հանդիսանում է օրենսդրության երկրորդ աղբյուրը և հիմնված է Սուրբ Ղուրանի վրա : Այն նույնպես նաև համարվում է շատ օրենսդրությունների բացատրություն : Սուննան պաշտպանվել է աղավաղումներից , լրացումներից և խարդախություններից : Դրա պատճառներից են այն, որ առաջին հերթին Ալլահն է պաշտպանել , հետո այն , որ հաղորդվել է վստահելի մարդկանց կողմից , ովքեր ամբողջ կյանքը անց են կացրել Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հադիթների ուսումնասիրությամբ : Նրանք մանրակրկիտ ուսումնասիրել են հաղորդվող հադիթների շղթան , դրանց տեքստերը , հավաստիությունը , կամ ոչ հավաստի լինելը , հաղորդողի դրությունը և նրա տեսանկյունը կապված

[2] Ալ- Բուխարի
[3] ԱՏ-Տիրմիզի

հադիթի հետ : Այսպիսով , գիտնականները մանրակրկիտ զննել են բոլոր հադիթները , որոնք հաղորդվել են Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն) և հաստատել են միայն նրանց իսկությունը , որոնք իրոք Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերն էին : Այդ պատճառով , Սունան մեզ հասել է մաքուր ձևով , առանց մտացածին հադիթների :

6. ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ.

Իսլամը համաշխարհային կրոն է , ուղղված ամբողջ մարդկությանը անխտիր : Այն ուղղված է և սևերին և սպիտակներին , և արաբներին և ոչ արաբներին , ամեն ժամանակներին և վայրերին : Այս կրոնում բոլոր մարդիկ համախմբվում են ոչ թե մաշկի գույնի , լեզվի , շրջանի , ծագման , հիման վրա , այլ հաստատված և պարզ հավատքի շուրջ , որը պարտադիր գործոն է : Ցանկացած անձ , ով հավատացել է Ալլահին , ինչպես Տիրոջ , Իսլամին , ինչպես կրոն , Մուհամեդին (Խ.Ա.Ո.Ն) ինչպես մարգարեյին , նա ընդունել է Իսլամ անկախ վայրից և ժամանակից : Ինչ վերաբերվում է նախորդ կրոններին , որոնք ինչ որ բաներում նմանվում են Իսլամին , ուղղված էին որոշակի ժամանակի և մարդկանց: Օրինակ Մովսեսը (Խ.Ա.Ո.Ն) ուղարկված էր միայն Իսլարայելի մարդկանց , Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**«Մենք տվել ենք Մուսային, Մովսեսին Գիր և դարձրել ենք նրան Իսրայելի որդիների հավատարիմ ուղղորդությունը :» Մի վերցրեք որևէ հովանավոր , բացի Ինձանից** :»» (Ղուրան 17 : 2)

Իսրայելի մարդկանց հետ ուխտը շարունակվեց Մովսեսի մահից հետո և մարդիկ շեղվեցին Ալլահի ճանապարհից , որը ցույց էր տվել նրանց Մովսեսը (Խ.Ա.Ո.Ն) : Դրանից հետո Ալլահը ուղարկեց նրանց Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) , որպեսզի վերադարձնի նրանց Իսկության և ուղղորդի : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Նրանց ետևից Մենք ուղարկեցինք Հիսուսին , Մարիամի որդուն , այն բանի իսկությամբ , ինչ մինչ այդ գրված էր Թորայում : Մենք տվեցինք նրան Ինջիլ Ավետարան , որտեղ կար հաստատուն ուղղորդություն և լույս , որը հաստատում էր այն , ինչ ուղարկվել էր Թորայում : Նա ճշմարիտ ուղղորդ էր և ավետիս աստվածավախներին** :» (Ղուրան 5 : 46)

Մարգարեների գալստյան ընդմիջումից հետո , Ալլահը ուղարկեց Մուհամեդին (Խ.Ա.Ո.Ն) ամբողջ մարդկությանը և ջիններին , և նրա գալուստով , ավարտվում է ուղերձը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օրհնյալ է Նա , Ով ուղարկել է Իր ստրուկին Տարբերակումը (Ղուրան) , որ նա պահպանի աշխարհները :» (Ղուրան 25: 1)

Աշխարհին պիտանելության շնորհիվ , Իսլամը չի հերքում մարդկանց մուտքը : Այն ընտրության հնարավորություն է տալիս նրան , ում հասել է այս կրոնը , ընդունել կամ մերժել այն : Միևնույն ժամանակ այն բացատրում է այն մարդու ճակատագիրը , ով շեղվել է նրանից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««Ասա. «Ճշմարտությունը ձեր Տիրոջից է : Ով ցանկանում է , թող հավատա , իսկ ով չի ցանկանում , թող չհավատա :» Մենք պատրաստել ենք անաստվածների համար Կրակ , որի պատերը կշրջապատեն նրանց բոլոր կողմերից : Եթե նրանք օգնություն խնդրեն , (կամ անձրև) , նրանց կօգնեն ջրով , որը նման է հալած մետղի (կամ ձեթի) , որը այրում է դեմքը : Զազրելի խմիչք և թշվառ բնակատեղը :»» (Ղուրան 18 : 29)

7. ՉԱՓԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ .

Գործոնները , որոնք նպաստում են Իսլամի տարածմանը և տարբերում են նրան մյուս կրոններից չափավորվածությունը , մեծահոգությունը , ընկալման դյուրությունը և ուսումնասիրությունն են : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացատրեց այդ այսպես .

«Ալլահի ամենասիրելի կրոնն է դյուրին միաստվածությունը :»[4]

Իսլամի սկզբունքն է հոգին չգերծանրաբեռնել ավելին ,քան տանելի է , լինի խոսք թե արարք: Իսկ ի՞նչպես այլ կերպ: Իսլամը մարդու բնածին էության կրոն է , որը չի հակասում նրան : Հակառակը, համապատասխանում է նրան , ուղղորդում և բերում է հնարավորությունների համապատասխան , երկրպագության : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Նա ձեզ համար ոչ մի դժվարություն կրոնում չի բերել :» (Ղուրան 22 : 78)

Նրա մեծահոգությունը արտահայտվում է օրենքների հեշտության , երկրպագության , ընդարձակության և դյուրինության մեջ , որոնք օգնում են իրագործել օրենքները և երկրպագությունը : Իսլամը հեռացնում է դժվարությունները , որպեսզի ամեն ոք հնարավորություն ունենա իրագործել դրանք : Այստեղից կարելի է եզրակացնել , որ Իսլամի բոլոր հրամանները և երկրպագության տեսակները եկել են մարդկային հնարավորություններին համապատասխան : Այդ ամենով հանդերձ , պարտավորվածությունները և

[4] Ալ Բուխարի

հրամանները ունեն իրենց անհատական վիճակները : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Եթե որևէ մեկը ստիպված է գնալ դրան , մի չցանկանալով արգելվածը, մի չցուցաբերելով անհնազանդություն և չանցնելով անհրաժեշտի սահմանները , ապա նա չունի մեղք :» (Ղուրան 2 : 173)

Օրենսդրությունը ուղարկվել է մարդկությանը , որին բնորոշ է թերությունները և սահմանափակ հնարավորությունները : Այդ իսկ պատճառով իսլամական օրենսդրությունը հոգում է ամենի մասին , որպեսզի համապատասխանի մարդու էությանը , որին Ալլահը թույլ է արարել : Ամենաբարձյալ Ալլահը բացատրում է այսպես.

«Ալլահը ձեզ հեշտացում է ցանկանում , քանի որ մարդ թույլ է արավել :» (Ղուրան 4 : 28)

Այսպիսով , Իսլամի հրամանները հիմնված են այս աստվածային սկզբունքի վրա , որը բացատրել է Ամենաբարձրյալ Ալլահը ասելով .

«Ալլահը չի ծանրաբեռնում մարդուն իր հնարավորություններից վեր :» (Ղուրան 2 : 286)

Իսկ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հաստատեց իր խոսքերով .

«Խուսափեք նրանից , ինչ ես արգելել եմ ձեզ , իսկ այնից ինչ ես ձեզ հրամայել եմ , արեք ինչը կարող եք , քանի որ , իրոք , ձեզանից առաջ ապրողներին խորտակել է միայն այն , որ նրանք շատ հարցեր էին տալիս և չէին համաձայնվում իրենց մարգարեների հետ :»[5]

Բայց պետք է իմանաք , որ մեծահոգությունը և թեթևացումը չի նշանակում Շարիաթի սկզբունքների և կրոնի թերացում : Չի կարելի թույլատրել արգելվածը կամ արգելել թույլատրելին , ցուցաբերել անփութություն օրենքների ընդունման և հրամանների իրականացման մեջ , չկատարել իսլամական սկզբունքները և համընդհանուր չափանիշները : Մեծահոգությունը և թեթևացումը հեռու են դժվարություններից և ծանրաբեռություններից , ինչպես նաև մեղքից և անհնազանդությունից : Աիշան (Խ.Ա.Ո.Ն) , Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կինը ասաց.

[5] Ալ Բուխարի , Մուսլիմ

«Երբ Ալլահի Մարգարեյին հնարավորություն էր ընձեռվում ընտրել երկու բաների միջև , նա ընտրում էր նրանցից ամենահեշտը , եթե այն մեղսալի չէր : Իսկ եթե այն մեղսալի էր , ապա նա դրանից ամենահեռու մարդն էր:»

8. ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ և ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .

Իսլամը կատարյալ կրոն է , որը այդպիսին է դարձրել Ալլահը և ավարտել է դրանով բոլոր նախորդող օրենսդրությունները : Ավարտով , կատարյալ է դարձել Նրա գութը և Նա գոհացել է Իսլամով , որպես կրոն, իր ստրուկների համար : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Այսօր , Ես ձեզ համար կատարյալ եմ դարձրել ձեր կրոնը , ավարտուն տեսքի եմ բերել Իմ գութը ձեզ և որպես կրոն ձեզ համար երաշխավորել եմ իսլամը :» (Ղուրան 5:3)

Այս կատարելությամբ , իսլամը հեռացրել է բոլոր նախորդող կրոններից : Ալլահը չի ընդունի մարդկանցից , երկրպագություն , բացի Իսլամից : Մինչ իսլամը , օրենսդրությունները ունեցել են ընդհանուր հոգևոր հիմքեր , նրանք դիմում էին հոգուն և կոչում էին ապաշխարհման , բայց նրանք ընդհանուր չէին ամենի համար , ինչ վերաբերվում էր այս և մյուս աշխարհների հարցերին , կյանքի կարգավորմանը և խորհուրդներին : Իսլամը եկավ լրացնելու , համակարգելու կյանքի բոլոր ոլորտները , ընդգրկելով ինչպես կրոնական , այնպես էլ աշխարհիկ կյանքի հարցեր : Իսլամի մարգարե Մուհամեդը (Խ.Ա.Ո.Ն) , պարզաբանեց այս ճշմարտությունը այսպես. Ալլահի առջև գոյություն ունի միայն մեկ կրոն , որով Նա ուղարկեց մարգարեներ , որպեսզի նրանք լրացնեն միմյանց : Սկսած Նոյից (Խ.Ա.Ո.Ն) և ավարտված նրանով (Խ.Ա.Ո.Ն) ., որի միջոցով ավարտվել է կրոնը և օրենքները կատարելության են հասցվել : Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Եվ ես և ինձ նախորդող մարգարեները նման են գեղեցիկ և շքեղ շենքի , որի անկյուններից մեկում պակասում է քար : Մարդիկ շրջում են նրա շուրջ և զարմանում են , բացականչելով .« Եթե այս քարը լիներ իր տեղը :» Ես եմ այդ քարը : Ես մարգարեներից վերջինն եմ :»»[6]

Հիմնվելով այս կատարելությանը և լիարժեքությանը , Ալլահը խոստացավ պահպանել իսլամը մինչ Դատաստանի Օրը , ի տարբերություն մյուս նախորդ կրոնների , որոնք Ալլահը չի խոստացել պահպանել , քանի որ դրանք ուղարկվել էին որոշակի ժամանակի և մարդկանց համար : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

[6] Ալ- Բուխարի և Մուսլիմ

« **Ճշմարիտ , Մենք ուղարկել ենք Հիշեցում և Մենք պահպանում ենք այն** :» (Ղուրան 15 : 9)

9. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ և ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ .

Իրականում , Իսլամը պարզության կրոն է , որտեղ չկա մոլորություն և անբացատրելիություն : Այս Ղուրանի նկարագրությունն է , որը հանդիսանում է իսլամական օրենսդրության առաջին աղբյուրը : Այն պարզ գիրք է , ուղղակի ուղեցույց մարդկանց և անքակտելի ապացույց : Այսպիսին է նրա պարզության բացատրությունը . Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Ալլահից ձեզ հայտնվել է լույս (Մուհամեդը) և պարզ Գիրը** :» (Ղուրան 5 : 15)

Մարդն ունի իրավունք հարցնելու այն , ինչ նրան անհայտ է կամ մտածել այդ հարցերի շուրջ մտքում : Այդ պատճառով , իսլամում մարդ ոչ թե ուղղակի առանց հարցերի հավատում է , այլ ստանում է կրոնի հետ կապված ցանկացած հարցի պատասխան : Նա հարցնում է մասնագետին , ով ունի շարիաթի գիտելիքներ , ով նվիրել է իրեն փնտրտուքին և կրոնի ուսումնասիրությանը : Օրինակ , բժշկության հետ կապված հարցերը տրվում են բժիշկներին , ինժեներներին վերաբերվող հարցերը , ինժեներներին , իսկ շարիաթի հետ կապված հարցերը տրվում են նրան , ով նվիրել է իրեն դրան : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Եթե դուք չգիտեք , ապա հարցրեք Հիշեցման ներկայացուցիչներին** :» (Ղուրան 16 : 43)

Իսլամում չկա անհասկանալի թեմա , որին մենք ուղղակի պիտի հավատանք և չհարցնենք : Այդ չի վերաբերվում մարդու բանականությունից դուրս հարցերին : Օրինակ , գաղտնիքների հարցերը , որոնք մեզ Աստված չի բացատրել : Քանի որ մարդուն ոչ մի օգուտ չկա այդ գիտելիքներից , որը հանդիսանում է գաղտիության հավատքի օգուտը : Ալլահը գովաբանել է նրանց , ում նկարագրում են այդ հավատքով , քանի որ այն հանդիսանում է անհավատի և հավատացյալի տարբերություն : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Եիլֆ , Լեմ , Միմ: Այս Գիր է , որում չկա կասկած , այն հանդիսանում է աստվածավախների ուղեցույց , ովքեր հավատում են գաղտնիին , աղոթում են և ծախսում են այն , ինչ Մենք տալիս ենք , ովքեր հավատում են քեզ ուղարկվածին և քեզանից առաջ ուղարկվածին և համոզված են Վերջին Կյանքին : Նրանք հետևում են իրենց Տիրոջ ճիշտ առաջնորդությանը և նրանք հաջողակ են** :» (Ղուրան 2 : 1-5)

10. ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ .

Իր հիմքով ,իսլամական շարիաթը դրական է , պարփակված չէ , անջատված չէ իր շրջապատից : Այն բացասական չի վերաբերվում իր շրջապատին : Հակառակը , այն բաց է , կոչ է անում մերձավորի սիրուն և բարերարությանը : Այդ պատճառով բավարար չէ , որ մուսուլմանը ինքը իրեն բարերար լինի , անհրաժեշտ է , որ նա այդպիսին լինի ուրիշների նկատմամբ , համագործակցի հասարակության հետ և այնտեղ տարածի բարիք : Այսպիսով , նա սովորեցնում է անգետին , առաջնորդում է մոլորվածին , հրամայում է բարիք և արգելում է գաղտնին , հրամայում է երկրպագել Ալլահին և Միաստվածությանը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Թող ձեր մեջ լինեն մարդկանց խումբ , ովքեր կոչում են բարիքի, հրամայում են թույլատրելին և արգելում են դատապարտելին : Հենց նրանք էլ կլինեն հաջողակ:» (Ղուրան 3 :104)

Ավելին, իսլամական շարիաթը բարերարությունը և բարիք գործելը դարձրել է երկրպագության լրացուցիչ գործոն : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Սիրիր մարդկանց համար այն , ինչ սիրում ես քեզ համար և կդառնաս մուսուլման:»[7]

Որպես ամրապնդում այս լավատեսության և դրդում , իսլամական Շարիաթը նշում է նրա բարձր արժանիքը , ով կտարածի բարիք : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Նա , ով կոչել է ճիշտ ուղղու , կստանա այնպիսի պարգև , ինչպիսիք կստանան հետևողները , որը բոլորովին չի նվազեցնում իրենց իսկ իրական պարգևը : Իսկ նա , ով մոլորության է կոչում , իրեն կառնի նրանց մեղքերը , ովքեր հետևել են դրան և չեն նվազեցնի իրենց սեփական մեղքերը :»[8]

11 . ՀԱՍՏԱՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐԳԱՑՈՒՄ

Իրավմամբ , իսլամը կրոն է , որը ընկալում է զարգացումը և համապատասխանում է ժամանակին : Նույնպես , նա ունի այն , ինչ տանում է զարգացման : Եվ այս է դրաձնում նրան պիտանի բալար ժամանակներին և վայրերին : Իսլամը եկավ հիմքերով , հասկացությամբ , կանոններով , համընդհանուր համոզմունքներով , սկզբունքներով , որոնք չեն փոփոխվում ըստ ժամանակի և վայրի : Այն փոփոխության չի ենթարկվում ոչ հավատքի ,

[7] Ատ- Տիրմիզի
[8] Մուսլիմ

ոչ երկրպագության , ոչ աղոթքի , ոչ բարեգործության , ոչ պահքի , ոչ հաջի , նրանց ժամանակի և սահմանների հարցերում : Իսկ ժամանակակիցը , որը հայտնվում է ժամանակի ընթացքում , վերադարձվում է Սուրբ Ղուրանին և Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) Սուննային : Եթե դրանք այնտեղ ենթակա են , ապա վերցվում են , իսկ եթե ոչ , գալիս է փնտրտուքի ժամանակը , երբ աստվածավախ գիտնականները ուսումնասիրում են այդ ,անկախ ժամանակի և վայրի : Այս կատարվում է Ղուրանի և Սուննայի տեքստերի ուսումնասիրությամբ , որոնց հիմքում ընկած է շարիաթի օրենքները : Նպատակն է հասնել օգտակարության մարդկության համար , որը չի հակասում շարիաթին : Իսլամը տվյալ պարագայում պետք է համապատասխանի ցանկացած ժամանակի և հասարակության : Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո. Ն) այս պատվիրանները արվել են այն ժամանակ , երբ նա (Խ.Ա.Ո.Ն) ուղարկեց Մուազ իբն Ջաբալին (Խ.Ա.Ո.Ն) Յեմենի բնակիչների մոտ , որպեսզի կոչի նրանց Իսլամի : Նա ասաց.

«Ի՞նչով դու կդատես :» Նա պատասխանեց .« Ալլահի Գրքով :» Մարգարեն հարցրեց .«Իսկ եթե չգտնե՞ս որոշում այնտեղ :» Նա պատասխանեց .« Ալլահի Մարգարեյի Սուննայով :» Մարգարեն ասաց. «Իսկ եթե այնտեղ էլ չգտնես որոշում :» Մուազը պատասխանեց . « Այդ դեպքում կփորձեմ ժրաջան փնտրել որոշում , հիմնվելով իմ հայեցողությանը :» Եվ ասաց Մարգարեն .« Փառք Ալլահին , ով ուղղորդեց Մարգարեյի դեսպանին այն բանի , ինչ սիրում է Ալլահի Մարգարեն :

12. ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ .

Իսլամը հոգ է տանում մարդու ֆիզիկական և հոգևոր պահանջներին, հավասարակշռության օգնությամբ , մերժելով ճնշումը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Իսկ այն միջոցներով , ինչ Ալլահը նվիրել է քեզ , ձգտիր Վերջին Կացարանին , բայց մի մոռացիր այս աշխարհում քո բաժնի մասին : Գործիր բարիք , ինչպես Ալլահը արարեց բարիք քեզ համար , և մի ձգտիր տարածել վատը երկրում , քանի որ Ալլահը չի սիրում չարիք տարածողներին :» (Ղուրան 28 : 77)

Այսպիսով , իսլամի տեսանկյունից մարդկային հոգին արավել է Ալլահից, որպես Երկրի փոխանորդ , երկրպագելու և Նրա օրենքները իրականացնելու : Հոգու լրացում , արարվել է մարմինը , որպեսզի դրա օգնությամբ իրագործի Ալլահի հրամանները , որոնք են երկրպագությունը , իրավունքների

իրականացումը , երկիրը մարդկանցով լցնելը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Նա , Մեկն է , Ով արարել է ձեզ երկրի փոխանորդներ և բարձրացրել է մեկը մյուսից աստիճաններով , որպեսզի փորձի ձեզ նրանով , ինչ Նա պարգևել է : Իրավմամբ , քո Տերը արագ է պատժի մեջ : Իրավմամբ , Նա Ներող և Գթասիրտ է :» (Ղուրան 6 : 165)

Իսլամում չկա վանականություն , աշխարհից հրաժարում և բարիքների մերժում , որոնք Ալլահը արարել և թույլատրելի է դարձրել Իր ստրուկներին : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««Ասա. « Ո՞վ է մերժել Ալլահի զարդերը , որոնք Նա պարգևել է Իր ստրուկներին և գեղեցիկ ճակատագիրը :» Ասա. « Աշխարհիկ կյանքում դրանք նրանց համար են , ովքեր հավատացել են և Հարության Օրը նրանք դրանք կլինեն բացառապես նրանցը :» Այսպես ենք մենք բացատրում նշանները իմացող մարդկանց համար :»» (Ղուրան 7 : 32)

Նույնպես, իսլամը չմտածված քայլերի և անկառավարելի կրքերի և հաճույքների օգտագործման կրոն չէ : Հակառակը, Իսլամը չափավորության կրոն է , որը միացնում է այս և հաջորդ կյանքը այնպես, որ ոչ մի կողմ չի գերակշռում : Հրամայված է հավասարակշռություն մտցնել հոգու և մարմնի միջև : Երբ մուսուլմանը տարվում է այս կյանքի հաճույքներով , նա հիշում է իր հոգևոր պահանջները , երկրպագությունը , որը պարտադիր է : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օ, նրանք , ովքեր հավատացել են : Երբ կոչում են աղոթքի ուրբաթ օրը , ապա ձգտեք Ալլահին հիշատակելու և թողեք առևտուրը : Այդպես լավ կլինի ձեր համար , եթե դուք միայն իմանայիք :» (Ղուրան 62 : 9)

Իսկ միայն աղոթքներով տարվելու ժամանակ , նա հիշում է իր մատերիալիստական ձգտումները , աշխատում և փնտրում է իր ճակատագիրը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Երբ աղոթքը ավարտվի , տարածվեք երկրով մեկ , փնտրեք Ալլահի գութը և հաճախ հիշատակեք Նրան , միգուցե դուք հաջողակ դառնաք :» (Ղուրան 62 : 10)

Իսլամը գովել է նրան , ով համախմբել է այս երկու հատկությունները : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մարդիկ , ում ոչ առևտուրը , ոչ առք ու վաճառքը չեն շեղում Ալլահին հիշատակելուց , աղոթք կատարելուց և բարեգործություն անելուց : Նրանք վախենում են այն օրից , երբ կշրջվեն սրտերը և հայացքները :» (Ղուրան 24 : 37)

Այսպիսով , Իսլամը պահպանել է հոգու համար իրավունք , որը համապատասխանում է աստվածային օրենքներին , որտեղ գոյություն չունի ծայրահեղություն և թերացում : Այդ իսկ պատճառով , մուսուլմանից պահանջվում է կառավարել և պատասխան տալ հոգուն արարքների , ձգտումների և դրանից ելնող ամենի համար , ելնելով Ալլահի խոսքերից .

«Նա , ով փոքր չափի բարիք է գործել , կտեսնի այն : Եվ , նա , ով փոքր չափի չարիք է գործել , կտեսնի այն :» (Ղուրան 99 :7-8)

Նույնպես , նրանից պահանջվում է պահպանել մարմինը , հաճույք ստանալով Ալլահի թույատրված բաներից , սննդից , ըմպելիքից , հագուստից , ամուսիններից : Միակ պայմանը չափավորվածությունն է : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Կերեք և խմեք , բայց չափը մի անցեք , քանզի Նա չի սիրում նրանց , ովքեր չափը անցնում են :» (Ղուրան 7 :31)

Ըստ շարիաթի , վատնումը համարվում է արգելված իսլամում : Անաս իբն Մալիքը , (թող Ալլահը գոհանա նրանով) , ասաց.

«Մեկ անգամ , Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կանանց տան մոտ եկան երեք մարդ , ովքեր սկսեցին հարցնել , թե ինչպես է Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) երկրպագում Ալլահին , և երբ , նրանց ասացին այդ մասին , նրանք , համարելով , որ այն այդքան էլ շատ չէ , ասացին . « Որքան հեռու ենք մենք Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), որին ներված են նրա անցյալ և ապագա մեղքերը :» Հետո նրանցից մեկը ասաց. « Ինչ վերաբերվում է ինձ , ես կաղոթեմ ամեն գիշեր :» Մյուսը ասաց. «Իսկ ես միշտ պահք կպահեմ :» Երրորդը ասաց. « Ես կխուսափեմ կանանցից և երբեք չեմ ամուսնանա :» Իսկ որոշ ժամանակ անց , նրանց մոտեցավ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) և ասաց. « Այդ դու՞ք եք ասել այսպես ու այսպես : Երդվում եմ Ալլահով , ես ձեզանից շատ եմ վախենում Ալլահից և ձեզանից շատ եմ վախենում Նրանից , սակայն որոշ օրեր ես պահք եմ պահում , իսկ մյուս օրեր ոչ, ես աղոթում եմ գիշերները

և քնում եմ , և նույնպես ամուսնանում եմ , իսկ նա , ով չի ցանկանում հետևել իմ Սուննային, ինձ հետ կապ չունի :»[9]

13. ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ .

Իսլամական օրենսդրությունը համարվում է ավարտուն և վերջին, մյուս բոլոր աստվածային օրենսդրությունների մեջ, քանի որ այն իր մեջ ներառում է բոլոր ճիշտ , վերջնական աստվածային սկզբունքները ,ցանկացած ժամանակի և վայրի համար : Ալլահը կանխորոշել է նրա համար ամբողջականություն և պահպանություն մինչ Դատաստանի Օրը և պարտավորեցրել է պահպանել այն , որը չի խոստացել մյուս օրենսդրություններին : Այսինքն, իսլամը չի ենթարկվի լիարժեք կամ մասնակի փոփոխության: Ալլահը պարտավորեցրել է պահպանել Ղուրանը , Շարիաթի առաջին աղբյուրը , որևէ ավելացումից , որը չի հանդիսանում նրա մաս , կամ նվազումից , որը նրանից է : Իսկ այն , ինչ Ղուրանից է , հանդիսանում է Ալլահի Մարգարեյի , Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) հավերժ հրաշք , ի հեաճուկս նրան նախորդող մարգարեների հրաշքների , որոնք ավարտվում էին մարգարեություններից հետո : Նրանց հրաշքները վկայել են իրենց ժամանակի և իրենց ուղերձների իսկությունը : Այսինքն, այդ հրաշքներին հավատում էին նրանք , ովքեր ականատես էին լինում : Ինչ վերաբերվում է Ղուրանին, այն հանդիսանում է հրաշք , որը կընթերցվի մինչ Դատաստանի Ժամը : Այն հանդիսանում է Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) իսկության հաստատում : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Ճշմարիտ , Մենք տվել ենք Հիշեցում և Մենք պաշտպանում ենք այն :» (Ղուրան 15: 9)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Չի դադարի գոյություն ունենալ համայնք իմ Ումմայից , որը կանգնած է հաստատուն Ճշմարտությանը , չի վնասի նրանց նա, ով կլքի առանց օգնության և նա , ով դեմ դուրս կգա նրան , մինչ Ժամի հասնելը :» [10]

Այս այն է , ինչում մեղադրում են Իսլամը , այլ կրոնների որոշ ներկայացուցիչներ : Նրանք փորձում են թուլացնել նրա տարածումը , վատնում են հսկայական ֆինանսական և մարդկային միջոցներ հակամարտելու , աղավաղելու և մոլորեցնելու : Այս ամենը կատարվում է

[9] Ալ- Բուխարի
[10] Մուսլիմ

Իսլամի թշնամիների կողմից , ում բարկացնում է այն , որ Իսլամ ընդունողը չի դուրս գալիս դրանից :

14. ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻՈՒԹՅՈՒՆ

Իր բազմակողմանիությամբ իսլամը ներառում է կյանքի բոլոր ոլորտները : Նա կարգավորում և օրենքներ է մշակում , որի հիման վրա կառուցվում է արժանի , օրինակելի հասարակարգ : Իսլամը աչքաթող չի անում մարդկային կյանքի ոչ մի կողմ , իր բոլոր դրսևորումներով , լինի այդ հոգևոր , մարմնական , կրոնական , աշխարհիկ , անձնական թե հասարակական , գծագրելով նրա համար լավագույն ուղղին : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մենք ուղարկել ենք քեզ Գիր , ամենի բացատրության համար , ինչպես ճշմարիտ ուղղու առաջնորդում , զութ և ավետիս մուսուլմանների համար :» (Ղուրան 16 : 89)

Այդ պատճառով , իսլամը համակարգել է մուսուլմանի կապը իր Աստծո , համայնքի և շրջապատող աշխարհի հետ : Դրա ապացույցն է բազմակողմանիությունը : Իսլամի խնդիրն է հոգ տանել բարոյական հարցերին , որոնք կապ ունեն մարդկային կյանքի հետ : Մարգարեն (Խ.Ա.Ո.)Ն ասաց.

««Հավատքը ունի վաթսուն և ավելի ճյուղավորումներ : Նրանցից լավագույն « Չկա աստվածություն , բացի Ալլահից " խոսքերն են , իսկ ցածրագույնը , ճանապարհից խոչընդոտ հեռացնելը : Ամոթխածությունը նույնպես հանդիսանում է հավատքի ճյուղ:»»

Այսպիսով , հիմնվելով այս բազմակողմանիությանը , Իսլամը ունի հետևյալ տարբերակիչ գծերը .

- Հարգանք մարդու նկատմամբ , որովհետև Ալլահը բարձր է դասել նրան մյուս արարածներից այս աշխարհում և ամենը ենթարկել է նրան : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մենք պատվել ենք Ադամի որդիներին և թույլատրել ենք նրանց տեղաշարժվել ցամաքով և ծովով : Մենք պարգևել ենք նրանց բարիք և տվել ենք ակնհայտ գերադասություն մյուս արարածներից :» (Ղուրան 17: 70)

- Փոխադարձ ծանոթություն: Իսլամը դրդում է լավ փախհարաբերության մուսուլմանական համայնքի և շրջապատող համայքների միջև , որը

պիտի իրականացվի ըստ խղճի, բարերարության , սիրո և փոխադարձության: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օ, մարդիկ: Իրոք, Մենք արարել ենք ձեզ տղամարդկանցից և կանանցից և դարձրել ենք ձեզ ազգեր և ցեղեր , որպեսզի դուք ճանաչեք միմյանց , իսկ Ալլահի առջև ձեզանից ամենապատվելին կլինի նա , ով ամենաաստվածավածն է : Ճշմարիտ Ալլահը Իմացյալն և Տեղյակն է :» (Ղուրան 49 : 13)

- Հասարակական փոխօգնության իրականացումը , քանի որ մուսուլմանի պարտքն է հոգ տանել եղբոր մասին : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Միմյանց նկատմամբ սիրո , գութի և կարեկցանքի փոխհարաբերությամբ , հավատացյալը նման է մարմնի , եթե նրա որևէ մաս ցավում է , մարմնի մյուս մասերը արտահայտվում են անքնությամբ և տենդով :»[11]

- Ազատություն , որը հիմնված է կրոնի կանոնների վրա : Այն ազատությունը դուրս է բերել կենդանական վիճակից : Հիմնվելով այս ազատությանը, յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռվում .

1. Մտքի ազատություն և անձնական կարծիքի արտահայտում , որը հիմնված է որոշակի կանոնների վրա : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օ, նրանք , ովքեր հավատացել են : Վախեցեք Ալլահից և ասեք ճիշտ խոսք :» (Ղուրան 33: 70)

2. Ունեցվածքի ազատություն: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Տղամարդկանց բաժին է հասնում այնից, ինչ նրանք ձեռք են բերել և կանանց բաժին է հասնում այնից , ինչ նրանք են ձեռք բերել :» (Ղուրան 4 : 32)

3. Ուսման և գիտելիքի ազատություն : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Գիտելիքի պահանջը հանդիսանում է յուրաքանչյուր մուսուլմանի պարտավորություն :»[12]

4. Այն բարիքների օգտագործման ազատություն , որոնք Ալլահը դրել է այս տիեզերքում : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

---

[11] Ալ- Բուխարի
[12] Իբն Մաջա

«**Նա, Մեկն է, Ով երկիրը ձեզ համար արել է հնազանդ: Գնացեք աշխարհով և ճաշակեք Նրանից բաժին և Նրան դուք կհայտնվեք հարությունից հետո**:» (Ղուրան 67 : 15)

- Ընդհանուր անվտանգության երաշխավորում: Այս հասկացությունը ներառում է.
- Կրոնի անվտանգություն: Այդ կատարվում է իսլամի կոչով և բազմաստվածության վերացումով: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Պայքարեք Ալլահի ուղղում նրանց հետ, ովքեր պայքարում են ձեր դեմ, բայց մի անցեք թույլատրելիի սահմանները: Իրավմամբ, Ալլահը չի սիրում հանցագործների**:» (Ղուրան 2 : 190)

- Հոգու անվտանգություն: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Եթե որևէ մեկը սպանի հավատացյալին դիտավորյալ, ապա հատուցումը նրան կլինի Հեենան, որտեղ նա կմնա հավերժ: Ալլահը կբարկանա նրա վրա, կանիծի նրան և կպատրաստի նրա համար մեծ տանջանք**:» (Ղուրան 4 : 93)

- Ունեցվածքի անվտանգություն: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Անօրինաբար մի կերեք իրար մեջ ձեր ունեցվածքը և մի գնեք դատավորներին, որպեսզի ուտեք մարդկանց ունեցվածքի մասը, գիտակցաբար մեղք գործելով:» (Ղուրան 2 : 188)

- Պատվի անվտանգություն: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Մի մոտեցեք շնության, քանզի այն նողկալի և վատ ուղղի է**:» (Ղուրան 17: 32)

- Գիտակցության անվտանգություն այնպիսի կրքերից, ինչպիսիք են թմրանյութերը և ալկոհոլը: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Օ, նրանք, ովքեր հավատացել են: Իրոք, արբեցնող խմիչքները, խաղամոլությունը, քարե զոհասեղանները կամ կուռքերը և բախտագուշակ աղեղները հանդիսանում են սատանայի գործերից վատագույնները: Խուսափեք դրանից, միգուցե դուք հաջողակ լինեք**:» (Ղուրան 5 : 90)

- Իրավունքների երաշխավորում: Իսլամը հրահանգել է հետևել բոլոր արարածների իրավունքներին, ըստ իրենց դիրքերի տարբերության, որպեսզի նրանց կյանքը դարձնեք լիարժեք, օգուտ տաք նրանց երկու

աշխարհներում , և լավացնեք նրանց գործերը : Իրավունքները բաժանվում են երկու խմբի .

1. Անձնական իրավունք . Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Երկրպագեք Ալլահին և մի տվեք Նրան զուգընկեր : Գործեք բարիք ծնողներին , բարեկամներին , որբերին , աղքատներին , հարևաններին , ովքեր ձեր բարեկամներն են և հարևաններին , ովքեր չեն հանդիսանում ձեզ բարեկամ , կողքին գտնվող ուղեկցորդներին , ճամփորդներին և ստրուկներին , որոնք ձեզ են պատկանում : Իրոք , Ալլահը չի սիրում գոռոզների և ամբարտավանների :» (Ղուրան 4 : 36)

2. Ընդհանուր իրավունքներ: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մի նախանձեք միմյանց , մի ատեք միմյանց , մի շրջվեք միմյանցից , և եղեք , Օ, Ալլահի ստրուկներ , եղբայրներ : Մի մուսուլմանը մեկ այլ մուսուլմանի եղբայր է , նա չի ճնշում նրան , չի դավաճանում նրա հետաքրքրությունները , նա չի ստում նրան և չի վիրավորում նրան արհամահանքով : Շատ տհաճ է յուրաքանչյուրի համար, նողկանք զգալ իր մուսուլման եղբոր նկատմամբ :»[13]

- Գթասրտություն : Այն ընդգրկում է բոլոր արարածներին : Գութի արտահայտման մեկ ձև է .
- Բարեգթություն մարդկանց նկատմամբ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Բարեգութին կների Բարեգութը : Եղեք բարեգութ նրանց նկատմամբ , ովքեր երկրի վրա են և ձեզ կգթա Նա , Ով երկնքում է : Բարեկամական կապերը արմատների միահյուսություն է , որը տրված է Բարեգութից : Այդ պատաճառով նրան , ով պահպանել է դրանք , Ալլահը կպահպանի , իսկ նրան , ով կտրում է դրանք , կկտրի Ալլահը :»[14]

- Բարեգթություն կենդանիների նկատմամբ : Գութը նրանց նկատմամբ իսլամը դարձրել է մեղքերի թողության և դրախտի մուտքի պատճառ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Մեկ անգամ մի մարդու , ով քայլում էր իր ճանապարհով , նեղեց ծարավը : Տեսնելով ջրհոր , նա իջավ այնտեղ , ըմպեց և երբ դուրս եկավ , հանկարծակի տեսավ իր դիմաց շան , որը ծարավից դուրս էր հանել լեզուն և ուտում էր հողը : Այդ տեսնելով մարդը ասաց ինքն իրեն .« Այս շանը

[13] Մուսլիմ
[14] Ալ- Հակիմ

ծարավը տանջում է այնպես , ինչպես ինձ էր տանջում », որից հետո ջրով լցրեց իր կոշիկը , բռնեց ատամներով , բարձրացավ վերև և խմեցրեց շանը , իսկ Ալլահը երախտապարտ եղավ դրա համար , ներելով նրա մեղքերը :

Մարդիկ հարցրեցին .« Օ, Ալլահի Մարգարե , մի՞ թե մեզ պարգև է հասնում կենդանիների համար :» Նա պատասխանեց .« Պարգև է հասնում ամեն կենդանիի համար :»»[15]

- Խորհրդակցում . Իսլամը պատվիրել է իր հետևորդներին խորհրդակցել ամեն հարցում , լինի կրոնական , ախարհիկ , արտաքին ,թե ներքին : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Ալլահի գութով դու մեղմ ես եղել նրանց նկատմամբ : Իսկ եթե դու լինեյիր կոպիտ և դաժան , նրանք կլքեյին քեզ անմիջապես : Ներիր նրանց , խնդրիր թողություն նրանց համար և խարհրդակցիր նրանց հետ գործերի շուրջ : Երբ դու որոշում ընդունես , ապավինիր Ալլահին , քանզի Ալլահը սիրում է ապավինողների :» (Ղուրան 3 : 159)

- Հավասարություն բոլոր մարդկանց միջև ըստ իրենց արարման : Չկա տարբերություն տղամարդու և կնոջ, սպիտակի և սևի , արաբի և ոչ արաբի միջև , բացի աստվածավախությունից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օ, մարդիկ: Վախեցեք ձեր Տիրոջից , Ով արարել է ձեզ մեկ մարդուց , արարել է նրանից զույգ նրա համար և բնակեցրել է շատ կանանց և տղամարդկանց , առաջացած նրանց երկուսից : Վախեցեք Ալլահից , Ում անունով դուք խնդրում եք միմյանց և վախեցեք կտրել բարեկամական կապերը : Իրոք, Ալլահը հետևում է ձեզ : » (Ղուրան 4 :1)

- Համատարած արդարություն իր ընդհանուր իմաստով , բոլորի նկատմամբ : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Իրոք, Ալլահը հրամայում է արդարություն ունենալ , բարիք գործել և նվերներ տալ բարեկամներին : Նա արգելում է նողկալին , դատապարտելի արարքը և անպատվությունը : Նա զգուշացնում է ձեզ , միգուցե դուք կհասկանաք նշանը :» (Ղուրան 16 : 90)

- Համընդհանուր անվտանգություն , լինի դա արտաքին , թե ներքին : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

[15] Ալ-Բուխարի և Մուսլիմ

«Չհաղորդե՞մ ձեզ հավատացյալի մասին : Այդ նա է , ում չարիքից պաշտպանված են ունեցվածքը և մարդկանց կյանքը , մուսուլման է նա , ում լեզվից և ձեռքերից ապահովագրված են մարդիկ , մուջահիդ է նա , ով մարտնչում է իր հոգով , ենթարկվելու Ալլահին , մուհաջիր է նա , ով թողել է վատ արարքները և մեղքերը :»[16]

- Սեր աշխատանքի և լավ ճակատագրի նկատմամբ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Երդվում են Նրանով , ում ձեռքերում է իմ հոգին , ձեզանից յուրաքանչյուրի համար վերցնել պարանը , փայտ կտրել և բերել մեջքին դրած , որպեսզի վաճառել ավելի լավ է , քան որևէ մարդուն խնդրանքով դիմելը, ով կարող է տալ որևէ բան , կամ կարող է և մերժել :»[17]

- Մաքրություն : Իսլամի սկզբունքները դրդում և հրամայում են մաքրության : Այն իրականացվում է հետևյալ գործողություններով .
- Ուտելուց առաջ և հետո լվացվելով : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ինչը ծամվել է ուտելու ընթացքում , պետք է կուլ տալ , իսկ ինչ ոչ , պետք է դուրս թափել : Նա , ով այդպես անի լավ կլինի , իսկ ով ոչ, չկա մեղք նրա վրա :»[18]

- Բերանի և ատամների մաքրության հոգալով. Այն իրականացվում է խոզանակի, տվյալ ժամանակ ,սիվակի օգնությամբ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Եթե այդ դժվար չլիներ իմ Ումմայի համար , ես կհրամայեի օգտագործել սիվակ ամեն աղոթքից առաջ : »[19]

- Հեռացումը և մաքրումը այն մասերի , որտեղ կարող է աղտ հավաքվել : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Հինգ բան վերաբերվում են բնածին որակներին . մազերի հեռացումը մասնավոր մասերից, թլպատումը , բեղերի կտրելը , թևատակերի մազերի հեռացումը և եղունգների կտրելը : »[20]

---

[16] Իբն Հիբան
[17] Ալ- Բուխարի
[18] Ալ Հակիմ
[19] Ալ- Բուխարի և Մուսլիմ
[20] Մուսլիմ

- Կղանքի և միզամուղ հատվածների մաքրումը : Սալման , (թող Ալլահը գոհանա նրանով) ասաց.

«Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արգելեց մեզ մեծ և փոքր կարիքները հոգալու ժամանակ դեմքով թեքվել դեպի Քիբլա , մաքրվել աջ ձեռքով , մաքրվել ավելի քիչ քան երեք քարերով , ինչպես նաև մաքրվել թրիքով կամ ոսկորով :»[21]

- Գեղեցիկ տեսքի և անուշ բույրի հոգալը: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

« **Օ, Ադամի որդիներ : Ամեն մզկիթում հագեք ձեր զարդերը** :» (Ղուրան 7 : 31)

- Մաքրություն, որովհետև նրա վրա է հիմնված շատ երկրպագություններ : Մաքրությունը լինում է զգայական և հեգևոր :

1. ԶԳԱՅԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ մարմնի մաքրությունն է ամեն աղտից : Այն պայման է ճշտության և որոշ երկրպագումների ընդունման համար : Օրինակ, լվացումը ճիշտ աղոթքի պայմաններից մեկն է , որը մուսուլմանը կատարում է օրը հինգ անգամ : Մարգարեն (Խ.Ա.Ո. Ն) ասաց.

«Աղոթքը չի ընդունվի առանց մաքրության , ինչպես նաև չի ընդունվի բարեգործությունը , ավարի գողությունը :»[22]

Սեռական գործողությունից հետո , անհրաժեշտ է կատարել մեծ լվացում : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Իսկ եթե դուք գտնվում եք սեռական աղտոտվածության մեջ, ապա մաքրվեք** :» (Ղուրան 5: 6)

Ամենաբարձրյալը դարձրել է մեծ լվացումը հաստատուն սուննա , որոշ ծեսերի համար : Այդ ծեսերից են ուրբաթօրյա աղոթքը , տոնական աղոթքը , մեծ և փոքր ուխտագնացությունը :

2. ՀՈԳԵՈՐ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ սրտի մաքրությունն է բազմաստվածությունից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Երկրպագեք Ալլահին և մի տվեք Նրան զուգընկեր** :» (Ղուրան 4 : 36)

Այն մաքրություն է նաև

[21] Մուսլիմ
[22] Մուսլիմ

- Ցուցամոլությունից : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Դժբախտություն աղոթողին , ով անփույթ է իր աղոթքներին , ով փարիսեցի է և մերժում է նույնիսկ ամենափոքր բանում :» (Ղուրան 107 :4-7)

- Ամբարտավանությունից: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Մի շրջեք ձեր երեսը մարդկանցից ամբարտավանությունից ելնելով և մի քայլեք երկրով ամբարտավան ձևով : Իրապես , Ալլահը չի սիրում գոռոզների և ամբարտավանների :» (Ղուրան 31 : 18)

- Նախանձից : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

Ես զգուշացնում եմ ձեզ նախանձից , քանի որ նախանձը խժռում է բարի արարքները այնպես , ինչպես կրակը խժռում է փայտը :'' Նա ասաց.'' Կամ , խոտը :''[23]

- Գոռոզությունից և ամբարտավանությունից : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Չի մտնի Դրախտ նա , որի սրտում կա ամբարտավանություն , փոշու հատիկի չափով:» Մի մարդ հարցրեց . « Իսկ ի՞նչ է , եթե մարդ սիրում է կրել գեղեցիկ հագուստ և կոշիկ :» Մարգարեն պատասխանեց . « Իրոք, Ալլահը Գեղեցիկ է և Նա սիրում է գեղեցկություն , իսկ ամբարտավանությունը իսկության մերժումն է և մարդկանց նկատմամբ ամբարտավան վերաբերմունքը :»[24]

15. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսլամը բարձր բարոյականության և կատարյալ էթիկայի կրոն է : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

« Իրոք, Ալլահը ինձ ուղարկել է լավագույն բարոյականության և արարքների իրականացման համար :»[25]

Որքան էլ որ գովելի լինի բարոյական հատկանիշը, Իսլամը կոչում է դրան : Որքան , որ վատ լինի բարոյական հատկանիշը , Իսլամը արգելում և նախազգուշացնում է : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բացատրելով ընդհանուր ուղղին , որով պետք է շարժվի մուսուլմանը հասարակության և մարդկանց հետ հարաբերություններում , ասաց.

---

[23] Աբու Դաուդ
[24] Մուսլիմ
[25] Ալ- Բուխարի

«Վախեցիր Ալլահի արգելքներից , կդառնաս ամենաերկրպագողը մարդկանցից , գոհացիր նրանով , ինչ Ալլահը կանխորոշել է քեզ , կդառնաս ամենահարուստը մարդկանցից , բարի վերաբերմունք ցուցաբերիր քո հարևանին , կդառնաս հավատացյալ , սիրիր մարդկանց համար այն , ինչ սիրում ես քեզ համար , կդառնաս մուսուլման , և շատ մի ծիծաղիր , քանի որ , իրոք, ծիծաղի մեծ քանակությունը սպանում է սիրտը :»[26]

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հաստատեց այս ուղղին սրտերում , բացատրելով այն մարդու վատ ավարտը , ով անցել է դրան : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

««Մեկ անգամ , Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց մարդկանց . « Գիտե՞ք արդյոք դուք , ով է սնանկ:" Նրանք պատասխանեցին . « Մեզանից սնանկ անվանում են նրանց , ովքեր չունեն ոչ գումար , ոչ ունեցվածք :» Այդժամ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Իրոք , իմ համայնքի անդամներից սնանկ կլինի նա , ով Հարության Օրը կբերի իր հետ աղոթքներ , պահքեր և պարտադիր բարեգործություն , բայց միևնույն ժամանակ կպարզվի , որ նա վիրավորել է սրան , չարախոսել է նրան, կորզել է մեկ ուրիշի ունեցվածքը , մեկի արյունն է թափել կամ հարվածել է մյուսին : Եվ այդ ժամանակ նրա բարի արարքներից կտրվի սրան կամ նրան : Իսկ եթե նրա բարի գործերի պաշարը ավարտվի , մինչ նա հաշիվ կտա բոլորին , այդ ժամանակ վիրավորածների մեղքերից նրան կտրվի որևէ բան և հետո նա կգնա դժոխք:»»[27]

Իսլամը այս ձևով նպատակ է դնում ստեղծել համակցված հասարակություն , որի ներկայացուցիչները կլինեն գթասիրտ միմյանց նկատմամբ , որը հիմնված կլինի սիրո և ալտրուիզմի վրա : Այսպիսով , Իսլամը հանդիսանում է էթիկայի և բարոյականության կրոն իր ընդհանուր իմաստով Ալլահի , Նրա Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) և համայն մարդկության համար : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Օ, նրանք , ովքեր հավատացել են : Թող որոշ մարդիկ չծաղրեն մյուսներին , միգուցե կարող է պատահել , որ նրանք իրենցից լավն են : Եվ թող որոշ կանայք չծաղրեն մյուս կանանց , միգուցե նրանք կարող են ավելի լավը լինել իրենցից : Մի վիրավորեք միմյանց և մի կոչեք միմյանց վիրավորական մականուններով : Զազրելի է կոչվել անհավատ , հավատալուց հետո : Իսկ նրանք , ովքեր չեն մեղանչում , կդառնան անօրեններ : Օ, նրանք , ովքեր

[26] Ատ- Տիրմիզի
[27] Մուսլիմ

հավատացել են : Խուսափեք շատ երթադրություններից , քանի որ որոշ ենթադրություններ հանդիսանում են մեղք : Մի հետևեք միմյանց և մի չարախոսեք միմյանց : Արդյո՞ք ձեզանից մեկին դուր կգա ուտել իր մահացած եղբոր միսը , եթե դուք նողկում եք դրանից : Վախեցեք Ալլահից : Իրոք, Ալլահը ապաշխարհություն Ընդունող և Գթասիրտ է :» (Ղուրան 49 : 11-12)

Իսլամը վստահության կրոն է , իր ընդհանուր հասկացությամբ , վստահություն մուսուլմանի և Տիրոջ ինչպես նաև մուսուլմանի և մարդկանց միջև : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Իրոք, Ալլահը հրամայում է ձեզ վերադարձնել վստահված ունեցվածքը իր տիրոջը և դատել արդարությամբ , երբ դատում եք մարդկանց միջև : Ինչ հրաշալի է այն , ինչ Ալլահը հորդորում է ձեզ : Իրոք, Ալլահը Լսող , Տեսնող է** :» (Ղուրան 4 :58)

Իսլամը ճշմարտացիության կրոն է : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

« **Օ, նրանք , ովքեր հավատացել են : Վախեցեք Ալլահից և եղեք ճշմարտացի** :» (Ղուրան 9 : 119)

Իսլամը հավատարմության կրոն է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«**Օ, նրանք , ովքեր հավատացել են , հավատարիմ եղեք պարտավորություններին** :» Ղուրան (5 :1)

Իսլամը բարության և մեղմության կրոն է : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Իրոք, ինչում էլ որ կայանա մեղմությունը , այն միշտ զարդարում է : Եվ ինչ որ կորցնում է մեղմությունը , դառնում է արատավոր :»[28]

Իսլամը սիրո և ընկերության կրոն է : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Ոչ ոք ձեզանից չի հավատա , մինչ չի սիրի իր եղբար համար այն , ինչ սիրում է իր համար :»[29]

Շարիաթը տարածեց այս արժանի հատկանիշները , բարոյականությունը և էթիկան հասարակության մեջ հետևյալ միջոցներով .

1- Հրաման թույլատրելիի և արգելք արգելվածի : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

---

[28] Մուսլիմ
[29] Ալ Բուխարի

«Դուք հանդիսանում եք համայնքներից լավագույնը , որը հայտնվել է ի բարօրություն մարդկանց , հրամայելով թույլատրելին , ետ պահելով դատապարտելիից և հավատալով Ալլահին : Եթե Գրի մարդիկ հավատային , ապա այդ լավ կլինի նրանց համար : Նրանց մեջ կան հավատացյալներ , սակայն մեծամասնությունը նրանցից անհավատներ են :» (Ղուրան 3 : 110)

2- Փոխադարձ խորհուրդը և բարի հրահանգումը , կարծիքի հայտնելը և միմյանց հետ անկեղծ խորհրդակցությունը : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Երդվում եմ երեկոյան ժամով : Իրոք, յուրաքանչյուր մարդ կորուստ ունի , բացի նրանցից , ովքեր հավատացել են , արդար գործեր են կատարել , միմյանց ճշմարտություն և համբերություն են պատվիրել:» (Ղուրան 103 :1-3)

Հարգելի ընթերցող.

Իրոք, իսլամին հետևելը աստվածային նվեր է և այն օգտագործում է միայն նա , ում Ալլահն է ուղղորդել : Ապա ձգտեք դառնալ այդ երջանիկներից մեկը , ովքեր օգտագործել են իրենց հնարավորությունը , որպեսզի հետևեն այս ճիշտ կրոնին : Կրոն , որից բացի Ալլահը ոչ մի այլ կրոն չի ընդունում : Եվ կանգ մի առեք միայն դրան , այլ կոչեք դրան նույնպես : Այն ընդունելուց հետո , քեզ մոտ պարտավորություն է առաջանում հաղորդել այն նրանց , ում դեռ չի հասել : Նույնպես բացատրեք դրա իրական պատկերը նրան, ում այն հասել է աղավաղված ձևով : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Հաղորդեք ինձանից գոնե մեկ այաթ :»

Իմ տեսանկյունից , իսլամի այդ տարբերակիչ հատկանիշները , որոնք հիշատակվել են այս գրքում, հանդիսանում են գրավական , որ քո մաքուր ճիշտ բնածին հատկանիշը գիտակցի այդ կրոնը և հեռացնի այն քողը , որը գցել են տեղեկատվությունը և մոլորությունը : Նրանք այնպես են արել , որ դու չկարողանաս տեսնել ոչինչ , բացի նրանից ինչ նրանք են ցանկանում : Նրանք ցուցադրում են իսլամի կանոններից դուրս բաներ , ինչպիսիք են ահաբեկչությունը և անպատասխանատու պահվածքը որոշ մուսուլմանների կողմից , ովքեր իսլամից գիտեն միայն անվանումը : Իրականում նրանք պատճառ են դարձել ոչ մուսուլմանների իսլամից հեռանալուն : Ես անկեղծ

խնդրում եմ Ալլահին , որ Նա լուսավորի քո գիտակցությունը , ցույց տա քեզ իսկությունը և հեռացնի քեզ ստից և ցուցադրի ճանապարհ :

ԱՎԵՏԻՍ

Հարգելի ընթերցող , Իսլամի առաջին ավետիսն է այն , որ ոչ մուսուլմանին , ով ընդունել է իսլամ , հասնում է կրկնակի պարգև . իր մարգարեյի և Մուհամեդ մարգարեյի հավատքի համար : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

««Նրանց , ում Մենք մինչ այդ Գիր ենք ուղարկել , հավատացին նրան ,Ղուրանին: Երբ նրանց ընթերցում են այն , նրանք ասում են . « Մենք հավատում ենք : Այն մեր Տիրոջ իսկությունն է : Մենք առաջ էլ մուսուլմաններ էինք :» Նրանք կստանան իրենց պարգևը երկակի այն բանի համար , որ համբերատար են եղել : Նրանք վերածում են չարիքը բարիքի և վատնում են նրանից , ինչ Մենք տվել ենք :»» (Ղուրան 28 : 52-54)

Երկրորդ ավետիսը այն է , որ Ալլահը մաքրում է բոլոր մեղքերը և վատ արարքները , որոնք գոյություն ունեյին Իսլամից առաջ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Իսլամը մաքրում է ամեն ինչ դրանից առաջ :»[30]

Երրորդ ավետիսը այն է , որ Ալլահը նրա բոլոր վատ արարքները կփոխարինի բարի արարքներով : Այդ Ալլահի գութն է , որը Նա տալիս է նրան , ում ցանկանում է : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

«Նրանք չեն կոչում ուրիշ աստվածների բացի Ալլահից , չեն սպանում մարդկանց Ալլահի արգելքին դեմ , եթե միայն , նրանք չունեն այդ իրավունքը և չեն շնանում : Իսկ նա , ով այդպես է անում կպատժվի : Հարության Օրը նրա տանջանքները կրազմապատկվեն և նա հավիտյան կմնա այնտեղ ստորացված : Այդ չի վերաբերվում նրանց , ովքեր մեղանչել են , և հավատացել և ճիշտ են վարվել : Նրանց չար արարքները Ալլահը կփոխարինի բարի արարքներով , քանզի Ալլահը ներող , Բարեգութ է :» (Ղուրան 25 :68-70)

Հիանալի հնարավորություն : Երջանիկ է նա, ով այն իրականացնում է : Ես զգուշացնում եմ քեզ չհետաձգել այդ հնարավորության օգտագործումը: Խորամիտ է նա , ով ենթարկել է իր հոգին և բարի արարքներ է արել մտածելով հետմահու կյանքի մասին : Իսկ անօգնական է համարվում նա, ով հետևել է իր հոգու կրքերին և հույսը դրել է միայն Ալլահին :

---

[30] Մուսլիմ

Թող Ալլահը օրհնի և ողջունի մեր Մարգարե Մուհամեդին, նրա ընտանիքին և հետևորդներին:

Փառք Ալլահին, աշխարհների Տիրոջը:

الحمد لله رب العالمين

وصل اللهم على أشرف المرسلين وعلى آله وصحبه أجمعين

Փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն:
Ես խնդրում եմ Նրանից
Շնորհակալություն հայտնել և պահպանել
Ամեն չարիքից մեր մարգարե Մուհամմեդին,
Նրա ընտանիքին, հետևորդներին և բոլոր նրանց,
Ովքեր ճշմարտության ճանապարհին հետևեցին
Նրան:

www.thekeytoislam.com

www.islamland.com

www.islamhouse.com

www.sultan.org

www.islamic–invitation.com